ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
18.11.2015

«Ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության մասին» պաշտոնական պարզաբանում

ՀՀ կենտրոնական բանկը հստակեցրել է ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության չափանիշները:

- Այսուհետ ֆինանսական կազմակերպությունները պետք է համագործակցեն ոչ պակաս, քան 4 անկախ գնահատողի հետ, որոնք պետք է ընտրվեն անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձանց անվանացանկից:
- Գնահատողները չպետք է փոխկապակցված լինեն միմյանց հետ, ֆինանսական կազմակերպության հետ, ֆինանսական կազմակերպության ղեկավարների հետ: Ֆինանսական կազմակերպությունը պետք է բացահայտի փոխկապակցվածությունը և բացառի նման գնահատողների հետ համագործակցությունը:
- Ֆինանսական կազմակերպությունը չպետք է հաճախորդին ուղղորդի կամ ծառայության մատուցումը պայմանավորի որևէ գնահատողի ծառայություններից օգտվելու հետ:
- Ֆինանսական կազմակերպությունը պետք է առնվազն տարին մեկ անգամ վերանայի իր հետ համագործակցող գնահատողների համապատասխանությունը վերոնշյալ չափանիշներին:

ԿԲ կողմից նման չափանիշների սահմանումը նպատակ ունի ապահովել, որպեսզի՝

- ֆինանսական կազմակերպությունները անշարժ գույքի գնահատողներին ընտրեն միատեսակ սկզբունքներով և չափանիշներով,
- ֆինանսական ծառայությունների սպառողները ծառայություններից օգտվելու համար ընտրության առավել լայն հնարավորություն ունենան,
- ֆինանսական ծառայություն մատուցելու նպատակով գույքի գնահատման գործընթացը լինի անկախ, օբյեկտիվ ու անաչառ, և բացառվի գնահատման գործընթացում ներգրավված կողմերի շահագրգռվածությունը:

Վերոնշյալ չափանիշները սահմանվել են Կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 3-ի նիստում ընդունված՝ «Ֆինանսական կազմակերպությունների համար գույքի գնահատում իրականացնող ընդունելի գնահատողների ընտրության մասին» պաշտոնական պարզաբանմամբ:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ/ֆաքս. 56 37 61
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am